

ՄՐՑՈՒՅԹ

Մարքեթինգային ռազմավարության մշակման, իրականացման և մարքեթինգային խորհրդատվության ծառայության ձեռք բերման

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հայտարարում է Մարքեթինգային ռազմավարության մշակման, իրականացման և մարքեթինգային խորհրդատվության ծառայության ձեռք բերման բաց մրցույթ: Մրցույթի առարկայի նկարագրությունը ներկայացված է սույն հայտարարության Հավելված 1-ում:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական անձիք, որոնք մրցույթի հայտի ներկայացման պահին ունեն համանման փորձ, մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրսներ:

Մրցույթին չեն կարող մասնակցել այն կազմակերպությունները՝

- որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիստուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ,
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն՝

1. Մրցույթի առարկայի գինը՝ ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ,
2. վճարման պայմանները, աշխատանքների կազմակերպման կարգն ու ժամկետները,
3. Նմանատիպ մատակարարումների և աշխատանքների իրականացման փորձը հավաստող տեղեկություններ, գործընկերների ցանկ

Սույն մրցույթը հայտարարողը իրավունք ունի մինչև առաջարկները ամփոփելը ցանկացած պահին դադարեցնել մրցույթի անցկացումը և հրաժարվել բոլոր ստացած հայտերից՝ առանց որևէ պարզաբանման և չկրելով որևէ պատասխանատվություն մասնակիցների առջև:

Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ք. Երևան, Մ.Խորենացու փողոց 15 շենք («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի շենք, 8-րդ հարկ) հասցեով, փակ ծրարով:

Մրցութային առաջարկների ներկայացման վերջնական ժամկետն է 2024 թվականի փետրվարի 26-ի ժամը 17.00-ն:

Հավելված 1

Ձեռք բերվող ծառայությունների նկարագրությունը

1. Շուկայի իրավիճակային վերլուծություն, SWOT անալիզ, խնդիրների սահմանում B2B և B2C մակարդակով, մարքեթինգային ռազմավարության մշակում, In house մարքեթինգային մասնագետի աշխատանքների կազմակերպում,
2. Ռազմավարության կազմում, կոնտենտի կոնցեպտի մշակում, իմիջային, իրավիճակային կամ պրոդուկտի կոնտենտի պրոֆեսիոնալ նկարահանում և մշակում, վիզուալների գրաֆիկական դիզայն, reel-երի գաղափարի կազմում, նկարահանում, մոնտաժ, եռալեզու վաճառող տեքստային կոնտենտի մշակում,
3. Բրենդի վերա-ոճավորում՝ restyling, բրենդուքի և բրենդի տեխնիկական օգտագործման կանոնների թարմացում, գործընկերների հետ կոմունիկացիոն գործընթացների հստակեցում, կորպորատիվ ատրիբուտիկայի թարմացում,
4. Կոմունիկացիոն հարթակների ընտրություն և մեդիա պլանավորում, Instagram էջի բացում, բրենդավորում, Facebook և Linkedin էջերի թարմացում, Ads հարթակի գրանցում, գովազդների կառավարում, նամակների և մեկնաբանությունների եռալեզու պատասխանում,
5. Arca.am կայքի redesign-ի խորհրդատվություն և աշխատանքների կառավարում,
6. Ընկերության ղեկավարության personal branding, անձնական էջերի մոնիթորինգ, հարցազրույցների կազմակերպում, ընկերության աշխատակիցների բրենդավորում, ֆոտոսեսիայի կազմակերպում, Linkedin էջերի թարմացում,
7. Գովազդային շուկայի ուսումնասիրություն, թիրախային շուկայի որոշում, մարքեթինգային ուղիների որոշում, գործընկերներ հետ պայմանագրերի կնքում,

հարաբերությունների կառավարում, աշխատանքների վերահսկողություն և մոնիթորինգ,

8. Ինֆլուենսեր շուկայի ուսումնասիրություն, բրենդի համար կոնցեպտուալ լավագույն ինֆլուենսերների առաջարկում, յուրաքանչյուր ինֆլուենսերի համար թեմատիկ գաղափարի գեներացում, աշխատանքների վերահսկողություն և մոնիթորինգ,
9. Մարքեթինգային ռազմավարության իրականացում, վերահսկում